

THE SOCIO-POLITICAL CONCEPT OF HOVHANNES SARGAVAG IMASTASER

Karlen Mirumyan

*Doctor of Philosophical sciences, Professor
Leading Researcher of the Institute of
Philosophy, Sociology and Law NAS RA*

SUMMARY

The article is devoted to the study of socio-political views of Hovhannes Sarkavag Imastaser, an outstanding scientist, philosopher and social thinker. The article presents the views of the thinker on the social structure of contemporary to him society, the institutions of power, the interrelationships of social strata, the principles of legality and justice, the existence of pronounced social inequality and unrighteousness, the willfulness of masters, and so on. The article shows that according to Sarvkag's opinion for the establishment of social harmony and peace, so necessary for the country at that time, it is necessary to affirm the rule of law, to introduce the principle of reasonable measure into the consciousness of the higher social strata.

Key words: social stratum, legality, justice, social oppression, national unity, justice, family law.

ԿԱՐԼ ՄԱՐԶՍԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վալերի Միրզոյան

*Փիլիսոփայության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան*

1. Մարքսի «Կապիտալ»-ը՝ 150 տարի անց. Կարլ Մարքսը հասցրեց տպագրել իր կյանքի հիմնական գործի՝ «Կապիտալի» միայն առաջին հատորը՝ 1867թ.: Անցել է 150 տարի: Մարքսի հանդեպ վերաբերմունքն այս ընթացքում եղել է ծայրահեղորեն հակասական: Խորհրդային Միությունում մարքսիզմ-լենինիզմը պետական գաղափարախոսություն էր, Մարքսը և Լենինը հռչակված էին տեսական մտքի գագաթ, անառարկելի հեղինակություն, նրանց աշխատությունները պարտադիր անցնում էին բոլոր մասնագիտությունների ուսանողները, «մշակում» էին «Կապիտալը» փիլիսոփայությունից, քաղաքատնտեսությունից,

գիտական կոմունիզմից քննություն հանձնելիս: Հասարակագիտական հրապարակումները սկսվում և ավարտվում էին մեջբերումներով: Որևէ կասկած այս գաղափարների և իրականության խզման մասին բացառվում էր, իսկ Մարքսին բուն Մարքսով բացատրելու, մանավանդ նրա մտքերը ինքնուրույն զարգացնելու փորձերն անմիջապես կասեցվում էին «ռևիզիոնիզմ» ախտորոշմամբ:

ԽՍՀՄ-ի փլուզմամբ վերացավ պարտադրանքը, և այդ փլուզումն ինքնաբերաբար նույնացվեց մարքսիզմի ձախողման հետ: Մարքսիզմի հանդեպ յուրատեսակ «ալերգիա» առաջացավ, Մարքսին սկսեցին մեղադրել հազար ու մի մեղքի համար: Տասնյակ հոդվածներ հրապարակվեցին «Մարքսի սխալը» թեմայով, որոնց մի մասը պարզապես նախկին մարքսիստի ապաշխարանքի միջոց էր, հավատափոխության վավերացում: Տեղին է բրիտանացի տեսաբան Թերի Իգլթոնը շատ պերճախոս վերնագրված իր «Ինչու էր Մարքսը ճիշտ» գրքի առաջին իսկ էջում արձանագրում. «Մարքսիստները ոչինչ այնքան չեն ցանկանում, որքան մարքսիստ լինելուց դադարելը»¹: Նա ինքը առանձնացնում է Մարքսին վերագրվող «տասը ստանդարտ սխալ» և մեկ առ մեկ դրանք հերքում:

Որքան կարող ենք դատել հակամարքսյան հրապարակումների մեծ մասից, Մարքսին մերժողները նրան անվանարկում են, պիտանկում, բայց ոչ լրջորեն քննադատում, քանի որ վերջինիս համար հարկավոր է «Կապիտալը» գոնե... կարդալ: Եվ եթե բժիշկն ու լեզվաբանը կարող են չկարդալ գիրքը (կամ կարդալ հաճույքի համար, ինքնազարգացման նպատակով), ապա տնտեսագետի, փիլիսոփայի, սոցիոլոգի և քաղաքագետի համար «Կապիտալն» անտեսելը դառնում է մասնագիտական թերաբժեքության պատճառ: Հարկ է օր առաջ ազատվել Մարքսի վաստակի նսեմացման անմիտ ավանդույթից, իսկ դրա լավագույն միջոցը «Կապիտալը» անաչառ կարդալն է և սեփական վերաբերմունք ձևավորելը: (Եվ եթե այսօր դասախոսն ապագա տնտեսագետներին հայտարարում է, թե «Մարքսը տգետ է եղել», ապա նա, ցավոք, սեփական իմացական տկարությունը փոխանցում է երիտասարդներին):

Կարլ Մարքսը 19-րդ դարի մեծ մտածողներից է, մահացել է 1883թ., ուստի իրավունք չունենք նրանից պահանջելու այն բանի

¹ Eagleton T., Why Marx Was Right, London: Yale University Press, 2011, p. 1.

իմացությունը, ինչը հնարավոր չէր ժամանակին իմանալ: Եթե որպես արմատական հեղափոխական, քաղաքական գործիչ Մարքսը սխալներ է թույլ տվել, ցանկալին մատուցել իրականության փոխարեն, ապա որպես գիտնական, հետազոտական աշխատանքի չարքաշ մշակ նա վեր է ամեն տեսակի քննադատությունից, իսկ տիտանական աշխատանքի արգասիքը՝ «Կապիտալը», արժանի է գոնե մեկ անգամ կարդալու (թեկուզ «սխալները» հայտնաբերելու և հիմնավորելու համար): «Կապիտալը» հարկավոր է կարդալ թեկուզ միայն այն պատճառով, որ, ինչպես ամերիկացի նշանավոր տնտեսագետ և սոցիոլոգ Ռոբերտ Հայլբրոններն է ասում, «մեր առջև մի տնտեսագետ է, որ կարդացել է մյուս բոլոր տնտեսագետների աշխատությունները, գերմանացի պեղանտ, որն առիթը բաց չի թողնում բոլոր կետերը դնելու համար i տառի վրա, հաշվի առնելու ամեն մի մանրամասն...»²: Հավելենք, որ 19-րդ դարում բազում արժեքավոր գրքեր են լույս տեսել, դրանցից մի քանիսն իրենց ասպարեզում հսկայական ներդրում են եղել, սակայն ոչ մեկն այնպես չի ազդել թե՛ տեսական մտքի և թե՛ համաշխարհային իրադարձությունների վրա, ինչպես Կ. Մարքսի «Կապիտալը»:

2. Որո՞նք են Մարքսի սխալները. Որևէ խելամիտ մարդ կհամարի՞ արդյոք, որ հատկապես Մարքսն է մեղավոր խորհրդային տարիներին փիլիսոփայության «մարքս-լենինյան» բնութագրի և առհասարակ ավելի ընդգրկուն «մարքսիզմ-լենինիզմ» բառակապակցության համար: Մարքսի հայացքների հետ կատարվեց այն, ինչը շատ մեծերի հետ է կատարվել, և ինչպես Մաքիավելին կասեր, թե ինքը մաքիավելական չէ, Նիցշեն՝ Նիցշեական չէ, Մարսքն էլ, եթե հնարավորություն ունենար կարդալու Լենինի, Տրոցկու, Բուխարինի, Ստալինի և բոլշևիկյան մյուս մարքսիստների գրվածքները, առավել ևս, եթե տեսներ իր անունով իրականացվող քաղաքականությունը, նույնպես կհայտարարեր, թե ինքը մարքսիստ չէ: «Մարքսիզմ-լենինիզմ» ասվածն իրականում Մարքսի փիլիսոփայության հիմնադրույթների հարմարեցումն էր «լենինիզմի» քաղաքական նպատակներին: Մասնավորապես, դասակարգերի գոյության և դրանց պայքարի մասին մարքսյան ըմբռնումը վերածվել էր քաղաքացիական անողոք պայքարի, «դասակարգային թշնամու» անխնա ոչնչացման միջոցի, մատուցվում էր որպես հանրային կյանքում

² Хайлбронер Р. Л., Философы от мира сего. Великие экономические мыслители: их жизнь, эпоха и идеи / Пер. с англ., М., Издательство АСТ, 2016, с. 197.

գաղափարական անհանդուրժողականության անխուսափելիության հիմնավորում:

Ուշագրավ է, որ ԽՍՀՄ փլուզման շեմին եղան փիլիսոփաներ, որ բացեիքաց հայտարարեցին, թե մարքսիստ փիլիսոփաներս բնավ էլ լավ չգիտենք Մարքսի փիլիսոփայությունը, քանի որ «Մարքսի բուն մոտեցումը փիլիսոփայությանը տակավին վատ է իմաստավորված և հարկավոր է, որ այն դառնա հատուկ ուշադրության առարկա»³: Բայց, հավանաբար, դժվար է հաղթահարել նախկին վերաբերմունքի իներցիան, քանի որ այս խոստովանությունից անգամ քսան տարի անց դեռ հարկ է եղել փիլիսոփաներին հիշեցնելու, թե... «մոռացել ենք Մարքսին»⁴, դեռ ավելին՝ վկայություն, որ «դժվար է Ռուսաստանում գտնել մեկին, ով «Կապիտալը» գոնե թերթել է ուշադիր»⁵: Մա նշանակում է նաև, որ Մարքսին աճապարանոք «սխալ հանդուրժում» պիտի նախապես իրենց համար պարզեն, իսկ արդյոք ճիշտ են հասկանում Մարքսի փիլիսոփայական հայացքները, որոնցից էլ բխում են նրա տնտեսագիտական և քաղաքագիտական եզրակացությունները:

Մարքսի հասցեին շրջիկ մեղադրանքներից մեկն այն է, թե ինքնին նրա գաղափարներն ուշագրավ են, բայց շատ են կտրված իրականությունից: Եվ սա ասվում է փաստական վիթխարի նյութի հիմամբ, կուռ տրամաբանությամբ գրված աշխատությունների մասին: Մարքսն ինքն է քննադատել նախընթաց փիլիսոփայությանը բնորոշ սքոլաստիկան, կտրվածությունը կենսական խնդիրներից, իսկ արմատական սոցիալական վերափոխումներ ուրվագծելիս մեծ տեղ է հատկացրել փիլիսոփաներին՝ պահանջելով հրաժարվել զուտ մտահայեցողական դատողություններից և իրական մասնակցություն ունենալ հանրային կյանքի իրադարձություններին:

Մարքսին դոգմատիզմի համար մեղադրելը ոչ մի քննադատության չի դիմանում: Իհարկե, մարքսիզմը, հատկապես «մարքսիզմ-լենինիզմի» տարատեսակը, չխուսափեց և չէր էլ կարող խուսափել դոգմատիզմից. մեղավորը Մարքսի գաղափարները պարզունակացնող, նույնիսկ գոեհկացնող բազում «մարքսիստներն» էին, և ԽՍՀՄ-ում մարքսիզմը

³ Баллаев А.Б., Козлова М.С., Предназначение философии. Мысли Маркс К. // Историко-философский ежегодник, М., Наука, 1989, с. 5.

⁴ Стёв Семёнов В.С., Забытый Маркс: о революции, социализме, человеке // Вопросы философии, 2009, № 6, էջ 33-46:

⁵ Сендеров В.А., Памяти марксизма // Вопросы философии, 2011, № 3, с. 48.

պետական գաղափարախոսության, անգամ յուրատեսակ կրոնի վերածումը: Բայց երբ ծանոթանում ենք Մարքսի հայացքները քննադատողների, առավել ևս «սխալներից» խոսողների դատողություններին, համոզվում ենք, որ հակամարքսիստների շրջանում ևս քիչ չեն դոգմատիզմին տուրք տվողները: Մինչդեռ «Կապիտալը» գեթ մեկ անգամ թերթողը չի կարող չնկատել մարքսյան դատողությունների կոտ հետևողականությունը, ընդհանուր գիտական մեթոդների (պատմականության, վերլուծության, համադրման, վերացարկման և այլն) հմուտ գործածությունը, եզրակացությունների բխեցման հստակությունը: «Կապիտալը» գիտական անաչառ հետազոտության դասական օրինակ է, և միանգամայն հիմնագուրկ է այն պնդումը, թե իբր «Մարքսը հայտնվել էր այն աշակերտի վիճակում, որ մաթեմատիկական խնդիր լուծելիս նախօրոք գիտի պատասխանը և լուծումն ամեն կերպ հարմարեցնում է դրան»⁶: Երբ ուսումնասիրում ենք երիտասարդ Մարքսի հասունացումը, տեսնում ենք, թե ինչպես է նա անվարան հրաժարվում նախկինում բարձր գնահատված որևէ դատողությունից, եթե տեսնում է դրա անհամապատասխանությունը իրականությանը: Այդպես է նա Լյուդվիգ Ֆոյերբախի փիլիսոփայության միջոցով ազատվում հեգելյան փիլիսոփայության իդեալիզմից, բայց հետո խորանալով ֆոյերբախյան լուծումների մեջ և չհամաձայնելով հեղինակի հետ, կրկին վերադառնում է հեգելյան փիլիսոփայությանը այս անգամ ընդունելով և նորովի զարգացնելով գերմանացի մեծ փիլիսոփայի մեթոդի առավելությունը («...Ես ինձ բացահայտ հռչակեցի այդ մեծ մտածողի աշակերտը»⁷): Անցյալի և ներկայի քիչ հեղինակներ կարող են համեմատվել Մարքսի հետ, երբ նա սուր կերպով քննադատում է որոշ փիլիսոփաների ջանքերը բացահայտելու հավիտենական ճշմարտություններ, վերին աստիճանի իմաստուն եզրակացություններ, համապարփակ գաղափարներ, որոնք մնում է իրականություն դարձնել, և մարդկությունն այդկերպ կհասնի երանելի կատարելության:

Բնավ նոր չէ Մարքսի հասցեին նեղ էկոնոմիզմի համար մեղադրանքը: Սակայն Մարքսի գաղափարները շատ ավելի լայն և հարուստ են, քան, օրինակ «տնտեսական մարդու» հայեցակարգի կողմնակիցների դատողությունները: Հանգամանորեն ուսումնասիրելով

⁶ Асатрян М.В., Ключ к экономическим и социально-политическим ошибкам марксизма // Вопросы философии, 2009, № 7, с. 30.

⁷ Маркс К., Капитал, т. 1, М., Политиздат, 1973, с. 9.

արտադրահարաբերությունների դերը հանրային կյանքում և դիտարկելով դրանք որպես այն հիմքը, որին խարսխված են վերնաշենքային երևույթները՝ քաղաքականությունը, մշակույթը, բարոյականությունը և այլն, Մարքսը մշտապես շեշտում է դրանց ակտիվ հետադարձ ազդեցության հանգամանքը տնտեսական կյանքի վրա: Այնպես որ միանգամայն տեղին է **Թերի Իգլթոնի** եզրակացությունը. «Այն պնդումը, թե Մարքսի համար իբր ամեն ինչ հանգում էր «տնտեսականին», անհեթեթ գերպարզունակացում է»⁸: Իհարկե, «Բազիս-վերնաշենք» փոխհարաբերության մեջ վճռորոշը նյութական կյանքի արտադրությունն է, տեխնոլոգիայի զարգացումը, աշխատանքի հասարակական արտադրողականության աճը և, այս առումով, դյուրին է արձանագրել, թե բազիսում կատարված փոփոխություններն ինչպես են ուղղակիորեն ազդում վերնաշենքային երևույթների վրա, մինչդեռ վերջիններիս հակազդեցությունը, որպես կանոն, միջնորդավորված է և միանգամից չի դրսևորվում: Զուտ տնտեսական պատճառականության դիրքերից անհասկանալի է դառնում աշխատանքի «մարդաստեղծ» էության մարքայան բացահայտումը, աշխատանքից օտարվածության պատճառների համակողմանի վերլուծությունը, «մարդ-տեխնիկա» համակարգի ներքին օրինաչափությունների ուսումնասիրությունը և, վերջինիս հիման վրա, աշխատանքի հումանիզացման նպատակի հիմնավորումը (ստորև կանդրադառնանք):

Մարքսի «սխալն» է համարվում կապիտալիզմի անխուսափելի փլուզման մասին դրույթը, որը ժամանակի փորձությանը չի դիմացել. կապիտալիզմը կա և ծաղկում է, իսկ ահա մարքսյան գաղափարների ոգով ստեղծված խորհրդային հասարակությունը պատմության գիրկն է անցել: Բնականաբար, որոշ դրույթներ չբռնեցին ժամանակի փորձությունը, մասնավորապես չհաստատվեց կապիտալիզմի «գերեզմանափորի»՝ բանվոր դասակարգի բացարձակ աղքատացման վերաբերյալ մարքսյան միտքը. կյանքը ցույց տվեց, որ արևմտյան շատ երկրներում բանվորները լիովին ապահովված էին բարեկեցիկ կյանքով, ուստի և ինտեգրված կապիտալիստական համակարգում և պատճառ չունեին դրա «գերեզմանը փորելու»: (Փակագծերի մեջ նկատենք, որ աշխատավորության վիճակի զգալի բարելավումը հետևանք էր նաև ԽՍՀՄ գոյության, որը կապիտալիստներին ակամա և շարունակ հուշում

⁸ Eagleton T., Why Marx Was Right, p. 119.

էր սոցիալիստական հեղափոխության ներմուծման վտանգը և պարտադրում ենթարկվել արհմիությունների պահանջներին):

Լավ, բայց մի թե այսօր մենք կանգնած չենք Մարքսի նկատած երևույթի մի նոր շրջադարձի՝ տեխնոլոգիական կործանարար գործազրկության և դրանից ածանցյալ սոցիալ-քաղաքական և կառուցվածքային ցնցումների շեմին: Արտադրության և ծառայության ոլորտների հարաճուն ավտոմատացումը, ռոբոտացումը, համակարգչայնացումը հազարավոր որակյալ աշխատողների զրկում են աշխատանքից, իսկ պակաս որակյալ աշխատանքի խորշն արդեն զբաղված է չքավոր երկրներից էժան աշխատուժի առկայությամբ: Կապիտալիզմը ձևավորվել է պատմական, տնտեսական, քաղաքական, սոցիալական որոշակի պայմաններում, նրա ողջ պատմությունն ուղեկցվել և ուղեկցվում է ոչ միայն տեխնոլոգիական նորարարությամբ, տնտեսական բարգավաճմամբ, սպառման և ժամանցի լայն հնարավորությունների ստեղծմամբ, այլև տարատեսակ ճգնաժամերով, մարդկային և նյութական վիթխարի կորուստներով, կոտորածներով, շրջակա միջավայրի ահագնացող ապականմամբ, ամբողջ քաղաքակրթության ջերմամիջուկային ինքնակործանման իրական սպառնալիքով:

Կապիտալիզմի մարքսյան ախտորոշումը վերահաստատում են ժամանակակից փիլիսոփաները (ոչ բոլորն են հավատափոխ եղել)։ «Կապիտալիզմը միշտ զարգացել է և շարունակում է զարգանալ անհավասարաչափ, անհամամասնորեն, աններդաշնակ, միակողմանի, անճոռնի»⁹: Եվ գնալով ավելի ակնհայտ է դառնում, որ կապիտալիստական համակարգի ինքնակարգավորման ներքին հնարավորությունները սպառվում են: Այնպես որ Մարքսի վերջնական եզրակացությունը միանգամայն հիմնավոր է եղել, և 150 տարի հետո նույնն են ձևակերպում ամերիկացի առաջատար մակրոսոցիոլոգները։ «Որպես համակարգ կապիտալիզմի գոյությունը 500 տարվա ընթացքում չի ապացուցում, որ նա հավերժ է»¹⁰: Եվ արդեն անվանումներ են որոնվում կապիտալիզմին փոխարինող նոր համակարգի մասին՝ առայժմ հիմնականում շատ զգուշավոր «հետկապիտալիստական» բնութագրմամբ: Եվ, թերևս, ամենապերճախոս վկայությունը

⁹ Семёнов В.С., Забытый Маркс, с. 43.

¹⁰ Валлерстайн И., Коллинз Р., Мани М., Дерлугьян Г., Калхун К., Есть ли будущее у капитализма? / Пер. с англ., М., Изд-во Института Гайдара. 2017. с. 16.

«հետկապիտալիստական» կապիտալիզմի տեսաբաններից մեկի՝ բրիտանացի լրագրող Պոլ Մեյսոնին է. «Մարքը վերադարձել է»¹¹:

Մարքսին մեղադրում են հետմարքսյան իրողությունների, մարքսիզմի տեսական աղավաղումների և Մարքսի անվամբ կատարված քաղաքական իրադարձությունների համար: Ըստ որոշ հեղինակների՝ «Մտալիներ... իրականացրել է Մարքսի գաղափարները, այդ թվում՝ նաև նրա սխալները»¹², «ստալինյան-բոլշևիկյան դիկտատուրան Կ. Մարքսի մշակումն է, նրա նախագիծն է»¹³: Բացարձակապես անսիրտ եզրակացություն է: Այս տրամաբանությամբ Հիտլու Քրիստոսին կարող ենք մեղադրել ինկվիզիցիայի համար, Վոլտերին, Ռուսոյին և ֆրանսիացի մյուս լուսավորիչներին՝ գիյոտինի, Ֆրիդրիխ Նիցշեին՝ նացիստական համակենտրոնացման ճամբարների համար և այլն: Իսկ Մարքսի գործածած (ոչ թե ստեղծած) «պրոլետարիատի դիկտատուրա» հասկացությունը ժամանակին նշանակել է ժողովրդի մեծամասնության իշխանություն, այսինքն՝ արտահայտել է ժողովրդավարության բուն էությունը:

«Կապիտալը» ոչ միայն կապիտալիստական արտադրանքների ծագման, հասունացման և անխուսափելի փլուզման մասին տնտեսագիտական ուսումնասիրություն է, այլև կապիտալիզմի գոյաբանության ընդգրկուն սոցիալ-փիլիսոփայական իմաստավորում: Այնպես որ, թեպետ Մարքսը զուտ փիլիսոփայական աշխատություն չի գրել, սակայն մեզ է ավանդել հանրային իրողությունների գիտական ուսումնասիրության և փիլիսոփայական իմաստավորման գույքերի մասական օրինակ: Իսկ արդեն մեզանից է կախված մարքսյան մեթոդաբանությունն օգտագործելը և XXI դարի իրողությունների գիտական համակողմանի ուսումնասիրությունը համատեղել փիլիսոփայական իմաստավորման հետ: Իսկապես, ժամանակակից աշխարհում պարբերաբար կրկնվող և խորացող սոցիալ-տնտեսական ճգնաժամերը լիովին բացատրվում են Մարքսի վերլուծական մեթոդաբանությամբ, և նման հետազոտական զինանոցի անտեսումը, եթե չասենք դրա հանդեպ քամահրական վերաբերմունքը թանկ է նստում

¹¹ Mason P., PostCapitalism: A Guide to our Future. London: Penguin Books, 2015, p. 49. Հեղինակը հիշեցնում է նաև, որ 2008 թ. տնտեսական ճգնաժամի սկզբում Մարքսի «Կապիտալ»-ի վաճառքը 300 տոկոսով ավելացել էր:

¹² Скиф М., Фатальная ошибка Маркса // http://samlib.ru/s/skif_m/01001_marx_mistake.shtml

¹³ Шумаков А., Ошибки “Капитала” К. Маркса // http://samlib.ru/s/shumakov_a_i/a51.shtml

հումանիտար գիտությունների վրա: Տարօրինակ է, որ մարքսյան մեթոդաբանությունը որպես ճանաչողական գործիք օգտագործելու փոխարեն ոմանք ցանկանում են «Կապիտալ»-ում գտնել այսօրվա իրողության մանրամասն նկարագրությունը: Բայց, մեկ էլ շեշտենք, նման մոտեցումը, այսինքն՝ Մարքսին մարգարեի կամ գուշակի վերածելը ի՞նչ կապ ունի 150 տարի առաջ գրված գրքի և նրա հեղինակի հետ¹⁴:

Ամեն մի գիտական վերլուծության ելակետը նպատակի ձևակերպումն է: Կարևոր է հասկանալ, թե ի՞նչ նպատակ ուներ Մարքսը, ինչո՞ւ ձեռնամուխ եղավ այս տիտանական աշխատանքին: Բնական է ամենից առաջ դիմել հեղինակի ձևակերպումներին: Դրանք կան գրքի 1-ին հրատարակության (1867թ.) առաջաբանում և երկրորդի վերջաբանում (1873թ.): Հենց սկզբից Մարքսը տեղեկացնում է ընթերցողին, որ «Կապիտալը» շարունակությունն է ավելի վաղ՝ 1859թ. հրապարակած իր «Քաղաքատնտեսության քննադատության շուրջ» աշխատության, որի որոշ դրույթներ ինքը սեղմ վերաշարադրում է գրքի առաջին հատորի առաջին գլխում: Երկրորդ հրատարակության վերջաբանում նա ավելի հանգամանորեն է շարադրում իր նպատակը, ինչպես նաև այդ նպատակադրման դիրքերից անդրադառնում է մի շարք կարծիքների, ձգտելով թե՛ համախոհների և թե՛ հակառակորդների արձագանքներից ինքն իր համար պարզել, թե որքանո՞վ է նպատակը ճիշտ հասկացվել:

Նպատակադրման հստակեցմանը, որպես գիտական վերլուծության մեթոդաբանական հիմքի, հետևում են ևս մի շարք դրույթներ: Այսպես, որևէ երևույթ, բացատրում է Մարքսը, հարկավոր է ուսումնասիրել դրա առավել զարգացած, ծավալուն փուլում: Ահա թե ինչու ապրանքային արտադրության առանձնահատկություններն ինքը հարկ է համարում ուսումնասիրել ոչ թե Գերմանիայի, այլ հատկապես Անգլիայի օրինակով: Այստեղից բխում է կարևոր մի եզրակացություն. զարգացած երկրների վիճակը «պակաս զարգացած երկրին ցույց է տալիս նրա սեփական ապագան»¹⁵: Այլ կերպ ասած, այն երևույթները, որ ժամանակակից

¹⁴ «Մարքսը մարգարե էր, ոչ թե բախտագուշակ» (Eagleton T., Why Marx Was Right, p. 67): Թերի Իգլթոնի միտքն այն է, որ Մարքսը, ինչպես և աստվածաշնչյան մարգարեները, ոչ թե փորձել է ապագան գուշակել, այլ բնութագրելով ներկան՝ իր խորը հակասություններով, զգուշացրել, որ եթե մարդիկ չփորձեն ինչ-որ բան փոխել, ապա առհասարակ ապագա չեն ունենա (նույն տեղում, էջ 66 – 67):

¹⁵ Маркс К., Капитал, т. 1, с. 9.

աշխարհում տեղի են ունենում զարգացած երկրներում վաղը դրսևորվելու են, մասնավորապես, նաև Հայաստանում, ուստի հարկավոր է դրանք, ինչպես նաև դրանք հաղթահարելուն ուղղված միջոցառումները ուսումնասիրել արդեն հիմա, ոչ թե սոսկ հայտնաբերել, թե «ճգնաժամը շրջանցելու է Հայաստանը»:

Հաջորդ դրույթը Մարքսի դիրքորոշումը շահեկանորեն տարբերում է վոյյունտարիստական և ֆատալիստական փիլիսոփայությունների ծայրահեղությունից. առաջինը գերազնահատում է անհատի դերը պատմության մեջ՝ այդպեղայ նսեմացնելով հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ պատճառակցման իրողությունը, իսկ երկրորդը (ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ տարբերակով) հակառակն է անում՝ մարդուն զրկում գործունակությունից, վերածում անխուսափելի իրադարձությունների կրավորական մասնակցի: Մինչդեռ ըստ Մարքսի՝ հասարակության զարգացումը «բնապատմական ընթացք» է. մի կողմից մարդիկ անկրկնելի են, ինքնուրույն սուբյեկտներ, անկրկնելի և առանձնահատուկ են նաև նրանց նպատակները և դրանց իրականացմանն ուղղված գործողությունները, որոնք էլ իր վերջո կազմում են պատմության ընթացքն ամեն մի որոշակի ժամանակում, ուստի և հասարակական երևույթներին բնորոշ օրինաչափությունը չի կարող չտարբերվել բնական աշխարհին հատուկ «կույր» օրինաչափություններից, բայց, մյուս կողմից, այն օբյեկտիվ պայմանները, որոնց մեջ ձևավորվում և գործում են այդ անկրկնելի մարդ-սուբյեկտները, հաղորդում են նրանց նպատակադրումների բովանդակությանը որոշակի ընդհանրություն, այդպեղայ հասարակական երևույթներին նույնպես հաղորդելով կարծես վերսուբյեկտային ընթացքի բնույթ: Այստեղից՝ տեսական և գործնական բնույթի մի կարևոր եզրակացություն, որ կարող ենք համարել յուրատեսակ հրամայական՝ ուղղված ամեն մի հասարակության քաղաքական-կառավարչական վերնախավին, այն է՝ եթե անգամ մենք ճանաչենք հասարակական զարգացման խորքային պատճառները, պետք է գիտակցենք, այդ բնականի նման՝ «բնականոն» փուլերի վրայով «ոչ էլ կարող ենք թռչել, ոչ էլ հրամանագրերով դրանք վերացնել», թեպետ կարող ենք «կրճատել և մեղմել երկունքի ցավերը»¹⁶: Նկատենք, որ Մարքսի որևէ քննադատ այստեղ կարող է, թերևս, հեղափոխական վոյյունտարիզմի տարբեր

¹⁶ Նույն տեղում, էջ 10:

տեսնել, իրադարձությունների բռնի «արագացման» ցանկություն, բայց մենք կհամաձայնեինք, եթե Մարքսը չլիներ զուտ կաբինետային գիտնական, այլ մասնակցեր որևէ կուսակցության կամ շարժման հեղափոխական միջոցառումներին: Ճիշտ է, Մարքսը համահեղինակն է 1848թ. հրապարակված «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի», բայց դա հենց մանիֆեստ է որ կա՝ նպատակների մասին հռչակագիր, որից բխող որևէ իրական գործողության Մարքսը չի մասնակցել: Մարքսը տեսաբան էր, գաղափարի մարդ, և կապիտալիստական արտադրանեղանակի հանգամանակից վերլուծությունից բխող նրա եզրակացությունը կապիտալիզմի անխուսափելի փլուզման մասին, վերստին տեսական-մտահայեցողական կառույց է: Կապիտալիզմն իր իսկ զարգացման տրամաբանությամբ պատրաստում է սեփական կործանումը և սեփական «գերեզմանափորին» բանվոր դասակարգին, բայց սադրարձյալ տեսական դատողություն է, ամրապնդված չէ ոչ գործողությունների, ծրագրով, ոչ պայքարի եղանակների և մեթոդների պարզաբանմամբ, ոչ ժամկետների մասին որևէ հիշատակումով:

Արժե, թերևս, խոսել «սխալ» հասկացության մասին, որն այդքան դյուրությամբ ումանք գործածում են Մարքսի տեսական ժառանգության համար: Սխալ, նախ կարող է լինել նպատակադրման ձևակերպման մեջ (խնդրակի սխալ), երկրորդ՝ տվյալների մեջ (փաստական սխալ), որոնց վրա կառուցվում է հեղինակի դատողությունը, երրորդ՝ բուն եզրակացությունների մեջ (բխեցման սխալ): Իսկ եթե մենք 150 տարի առաջ գրված գրքի դատողություններն ու եզրակացությունները համեմատում ենք արդիականության հետ և հայտնաբերում անհամապատասխանություն, ապա սխալ է հենց մեր կատարած այդ համեմատությունը: Իսկ քիչ են սխալվում ժամանակակից տնտեսագետները և սոցիոլոգները: Չէ՞ որ ոչ մի տեսաբան չկարողացավ կանխատեսել 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամը (թերևս, սխալված չենք լինի ասելով, որ դա նաև տնտեսագիտության ճգնաժամն էր): Ահա թե ինչ է ասում կանխատեսումների հարցում սխալվելու անխուսափելիության մասին Ալվին Թոֆլերը, ապագայի վերաբերյալ կանխատեսումների ասպարեզի, թերևս, ամենանշանավոր դեմքերից մեկը. «Տնտեսագետները բավական խորաթափանց են և ջանասեր, այդուհանդերձ, նրանք հիմնավոր պատճառներ ունեն իրենց սխալ

կանխատեսումներից շատերի համար»¹⁷: Եվ իսկապես, հեղինակը նշում է տեղեկատվության անորոշությունը, միջավայրի փոփոխականությունը, շտապողականությունը, պատահական հանգամանքների ի հայտ գալը և այլն: Այդպես է, անշուշտ, և այդպես է եղել նաև 150 տարի ցուած, երբ Մարքսն ավարտում էր իր կյանքի գործը: Այնպես որ, անցյալի մտածողներին հարկավոր է գնահատել ըստ այն բանի, թե ինչ են նրանք տվել իրենց ժամանակի համեմատ և ժամանակի համար: Այդ տեսակետից կապիտալիստական արտադրաեղանակի ծագման, հասունացման և հետագա անխուսափելի կործանման մասին մարքսյան հիմնարար հետազոտությունը՝ «Կապիտալը», բացառիկ արժեքավոր է թե՛ փաստացի վիթխարի նյութի արձանագրման, թե՛ հետազոտության մեթոդաբանության և թե՛ ձևակերպած օրինաչափությունների մեծամասնության առումով:

Հավարտ հիշեցնեմ Մարքսի մի սխալի մասին, որին տողերիս հեղինակն անդրադարձել է այն տարիներին, երբ դեռ այդքան էլ ընդունված չէր նրա սխալներից խոսելը¹⁸: Դա վերաբերում է մարքսյան այն դիտողությանը, թե Հեգելը, աշխատանքի դիալեկտիկայի բացահայտման ասպարեզում բացառիկ ներդրմամբ, մասնավորապես՝ աշխատանքից աշխատողի ինքնօտարման երևույթի համակողմանի ուսումնասիրությամբ հանդերձ, տուրք է տվել որոշակի միակողմանիության. «Նա քննարկում է աշխատանքը որպես էություն, որպես մարդու ինքն իրեն հաստատող էությունը, նա տեսնում է աշխատանքի միայն դրական կողմը, բայց ոչ բացասականը»¹⁹: Մարքսիստական գրականության մեջ կայունացել էր այդ դրույթի մեկնաբանությունը որպես Հեգելի ոչ քննադատական փոտեցում արտադրության կապիտալիստական եղանակի հանդեպ: Մինչդեռ «Ենայի ռեալ փիլիսոփայություն» աշխատությունը լիովին հեքքում է այդ մեկնաբանությունը: Այստեղ Հեգելը խոսում է այն մասին, թե աշխատանքի ծայրահեղ տրոհվածությունը բուն աշխատանքը դարձնում է «ավելի մեխանիկական, բթացած, ոգեզուրկ», ինչը բացասաբար է անդրադառնում աշխատողի վրա՝ «բուրժուազիա աշխատանքը

¹⁷ Toffler A., Toffler H., *Revolutionary Wealth*, N.Y.: Random House, 2006, p. 117.

¹⁸ Տե՛ս Միքայել Վ.Ա., Աշխատանքի մարքսյան փիլիսոփայությունը, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 75 – 78, 272 – 275:

¹⁹ Маркс К., Экономическо-философские рукописи 1844 года // Маркс К., Ф. Энгельс. Сочинения, т. 42, М., Политиздат, 1974, с. 41. т. 42, с. 159. Տե՛ս նաև էջ 156, 159, 167, 170:

սահմանափակում է նրան մի կետում, և աշխատանքն այնքան ավելի կատարյալ է, որքան ավելի միակողմանի է²⁰։ Հեգելը չի բավարարվում սոսկ արձանագրությամբ, այլ նաև վիճակի սոցիալ-տնտեսական պատճառներն է մատնացույց անում (փաստորեն, կանխելով իր իսկ Մարքսի նմանօրինակ վերլուծությունը²¹), մասնավորապես՝ այն բանում, որ «մեծ թվով մարդիկ դատապարտված են կատարելապես բթացնող, անառողջ և անսպասելի աշխատանքի», աշխատանքի սուբյեկտի «հմտությունը սահմանափակող» աշխատանքի, «դրսևորվում է մեծ հարստության և մեծ աղքատության հակադրությունը»²²։ Այսպիսով, Մարքսը սխալվել է այս հարցում, Հեգելի դիրքորոշումը գնահատելիս։ Բայց և մենք կսխալվենք, եթե չենք, որ Մարքսը չէր կարող ծանոթ լինել Հեգելի «Եկայի ռեալ փիլիսոփայությանը», որը լույս է տեսել միայն 1931թ., հետևաբար, չէր կարող ամբողջական պատկերացում ունենալ իր նախորդի դիրքորոշման մասին։

3. Մարդկային աշխատանքի էության և աշխատանքի մարդկայնացման մարքսյան հայեցակարգը. «Աշխատանքը թվում է միանգամայն պարզ կատեգորիա», նախապես արձանագրում է Մարքսը տարածված ընկալումը²³, ապա դրվատանքով նշում «Աղամ Սմիթի կատարած հսկայական քայլն առաջ»։ Ի տարբերություն նախորդ տնտեսագետների, որոնք հարստության աղբյուր աշխատանքը կապում էին դրա որոշակի ձևի հետ (հողագործական աշխատանք, վաճառականություն, մանուֆակտուրա), Սմիթը գիտական հետազոտության կենտրոնում է դնում աշխատանքն առհասարակ և բուն հարստությունը մեկնաբանում որպես մարդկային առարկայացած աշխատանք։ Իսկապես, հենց Սմիթն ապրանքի սպառողական արժեքի «հիմնական և իրական» չափանիշ (the ultimate and real standard) հռչակեց աշխատանքը։ Ուստի, Սմիթի տրամաբանությամբ, միննույն աշխատանքը կատարելիս միջին առողջության, ֆիզիկական և հոգևոր ուժի, հավասար հմտությունների և ճարտարության տեր աշխատողը պիտի որ ներդնի «իր հանգստի, ազատության և երջանկության միննույն բաժինը (the same portion of his ease, his liberty, and his happiness)»²⁴։ Այստեղ

²⁰ Гегель, Истинная реальная философия // Работы разных лет, т. I, М., Мысль, 1970, с. 343.

²¹ St u т. 42, с. 53, 90.

²² Նույն տեղում, էջ 343 – 344:

²³ Маркс К., Экономические рукописи 1857–1861 гг., ч. I, М., Политиздат, 1980, с. 41.

²⁴ Smith A., An inquiry into the nature and causes of the wealth of nations, <http://socserv.mcmaster.ca/econ/ugcm/3113/smith/wealth/wealbk01>

է, որ Մարքսը փորձում է հաղթահարել սմիթյան ժամտեցման միակողմանիությունը. գուտ տնտեսագիտական ընկալման պարագայում զարմանալի չէ բնավ, որ Սմիթն աշխատանքի բուն ընթացքը, այսինքն՝ աշխատուժի ծախսումը բուն սուբյեկտի կողմից, դիտում էր միայն որպէս հանգստի, ազատության և երջանկության գոհաբերում, «չտեսնելով, զրոյում է Մարքսը, — այդ ծախսման մեջ նաև նորմալ կենսագործունեություն»²⁵: Մինչդէռ ատողջ մարդը, Մարքսի համոզմամբ, ունի «նաև պահանջումը՝ աշխատանքի նորմալ բաժնի և հանգստի ընդհատման»²⁶:

Այնպէս որ սմիթյան «գոհաբերության» հայեցակարգը, թեպէտ «ճիշտ է արտահայտում *վարձու բանվորի սուբյեկտիվ վերաբերմունքն իր սեփական գործունեությանը*», սակայն թույլ չի տալիս տեսնելու երկու հանգամանք: Նախ, որ աշխատանքը, ամեն ինչից զատ, նաև իր աշխատողի «որոշակի վերաբերմունքն է իր կողմից մշակվող առարկային և իր սեփական աշխատանքային ընդունակություններին»²⁷, և որ «հակառակ պարագայում դա չէր լինի նպատակաւաց գործունեություն, աշխատանք»²⁸: Եվ, երկրորդ, դրա շնորհիվ բուն աշխատանքի ընթացքում «արտաքին նպատակները կորցնում են միայն արտաքին, բնական անհրաժեշտության երևութականությունը և դառնում նպատակներ, որոնք անհատն ինքն է իր առջև դնում, հետևաբար, դրվում են նրա, իբրև սուբյեկտի, առարկայական մարմնավորում, ինքնիրագործում, այսինքն՝ իբրև իրական ազատություն, որի գործունեյա դրսևորումն է հենց աշխատանքը»: Վերջիվերջո, ըստ Մարքսի տպավորիչ բառախաղի, «այն, ինչ Սմիթը համարում է հանգստի գոհաբերություն, կարելի է նաև անվանել ծուլության, անազատության, դժբախտության գոհաբերություն, այսինքն՝ բացասում որոշակի բացասական վիճակի»²⁹:

Այստեղից Մարքսի հետազոտական ուշադրության կենտրոնը տեղափոխվում է սոցիալ-քաղաքական դաշտ. հարցադրումները ուղղված են աշխատանքի բարերար բովանդակության և սոցիալական խաթարող ձևերի հակամարտության բացահայտմանը և

²⁵ Մարքս Կ., Կապիտալ, հատ. 1, Եր., Հայպետհրատ, 1954, էջ 54:

²⁶ Маркс К., Экономические рукописи 1857—1861 гг., Ч. 2, М., Политиздат, 1980, с. 111.

²⁷ Նույն տեղում, էջ 114: Ընդգծումը Մարքսինն է:

²⁸ Маркс К., Теории прибавочной стоимости (4-й том «Капитала»), ч. 3, М., Политиздат, 1978, с. 274.

²⁹ Маркс К., Экономические рукописи 1857—1861 гг., ч. 2, с. 111, 114.

հաղթահարմանը: Ինչո՞ւ է «մարդու սեփական գործունեությունը նրա համար դառնում օտար, նրան հակադիր ուժ, որը ճնշում է նրան, փոխանակ ինքը իշխի դրա վրա»³⁰: Ինչո՞ւ է աշխատողն ինքն անտարբեր կատարած աշխատանքի բուն բովանդակության հանդեպ³¹, ինչո՞ւ է նա սեփական գործունեությունը ընկալում ոչ թե որպես իր մտավոր ու ֆիզիկական ուժերի դրսևորում, աշխատանքային հմտությունների զարգացում, այլ տանջանք, իրոք որ գոհաբերություն, ինչո՞ւ, հարկադրանքը դադարելուն պես, նա «աշխատանքից փախչում է՝ ինչպես ժանտախտից»³²: Ինչո՞ւ է, ուրեմն, փիլիսոփայական լեզվով ասած, «աշխատանքը աշխատողի համար *արտաքին* ինչ-որ բան, իր էությանը չպատկանող»³³, ինչո՞ւ «աշխատանքի իմաստը նրա համար այն չէ, որ նա գործում է, մանում, շաղափում և այլն, այլ այն, որ դա *վաստակելու* եղանակ է, որ նրան հնարավորություն է տալիս ճաշելու, պանդոկ գնալու, քնելու»³⁴: Այս հարցերի մարքսյան պատասխանը մեկն է՝ պատճառը աշխատանքի հարկադրական բնույթն է, ստիպողական լինելը: Խնդիրը, այսպիսով, ստանում է գործնական-քաղաքական ուղղվածություն ազատագրել աշխատանքի իրական իմաստը խաթարող ձևից, հաղթահարել աշխատողի օտարվածությունը:

20-րդ դարի 70-ական թվականներից մարդկային աշխատանքի իմաստի նկատմամբ տեսական և գործնական հետաքրքրության մի իսկական «պայթյուն» տեղի ունեցավ. հատկապես մարդկանց հանրային կեցության այդ վճռորոշ ասպարեզում ակնկալվող արմատական փոփոխություններին վերաբերող դատողություններն են ընկած հետաքրքրունաբերական հասարակության հիմնական բնութագրիչների տարատեսակ ուրվագծերում³⁵: «Աշխատանքային կյանքի որակի» ուսումնասիրության և սոցիալական կարգավորման

³⁰ Մարքս Կ., Էնգելս Ֆ., Ֆոյերբախ. մատերիալիստական և իդեալիստական հայացքների հակադրությունը // Ընտիր երկեր, հ. 1, 1972, էջ 33:

³¹ St u Маркс К., Глава шестая. Результаты непосредственного процесса производства // Маркс К., Ф. Энгельс. Сочинения, т. 49, М., Политиздат, 1974, с. 69.

³² Маркс К., Экономическо-философские рукописи 1844 года, с. 91.

³³ Նույն տեղում, էջ 90: Ընդգծումը Մարքսին է:

³⁴ Մարքս Կ., Վարձու աշխատանք և կապիտալ // Մարքս Կ. և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հատ. 1, Եր., 1972, էջ 202: Ընդգծումը Մարքսին է:

³⁵ St u D. Bell, Labor in the Post-Industrial Society. Special Issue: The World of the Blue Collar Worker // Dissent, vol. 19, № 1, 1972.

խնդիրներին էին նվիրված բազում հրապարակումները, գիտաժողովները, նորաբաց հետազոտական կենտրոնները, ամենաբարձր մակարդակում ընդունվեցին համապատասխան կառավարչական որոշումներ: Միջազգային մի շարք ծրագրերի իրականացման նախաձեռնություն հանդես բերեց Աշխատանքի միջազգային կազմակերպությունը՝ ամփոփելով զանազան երկրների փորձը³⁶: Մի խոսքով՝ եթե ամփոփենք Պոլ Ռիկյորի գնահատմամբ, տեսական մտքի մեծ իրադարձություններից մեկը եղավ «մարդու որպես աշխատավորի բացահայտումը կամ վերաբացահայտումը»³⁷: Այսկերպ հաստատվում է մարքսյան հայտնագործությունը աշխատանքի իրական էության և մարդաստեղծ դերի մասին:

Մարքսի այդօրինակ կանխատեսումները իրականություն են դառնում նաև գործնական-տեխնոլոգիական առումով: «Աշխատանք» և «տեխնիկա» հարաբերակցության մարքսյան ուսումնասիրության մեթոդաբանության մեջ կարող ենք առանձնացնել երկու կողմ՝ մեկը տեխնիկայի գործառության և զարգացման ներքին օրինաչափությունների, «մարդ - տեխնիկա» համակարգի ինքնաշարժման, ինքնազարգացման օրինաչափությունների պարզաբանումն է, մյուսը տեխնիկայի և տեխնոլոգիայի՝ որպես սոցիալական երևույթի պրոտաքին պատճառակցվածության բացահայտումն է, մարդկային աշխատանքի զարգացման և բուն մարդու էությանական կարողությունների, վրա դրանց ազդեցության լուսաբանումը³⁸:

Բուն տեխնիկան, ըստ Մարքսի, մարդու նպատակահարմար գործունեության համար է ստեղծվել, ուստի և տեխնիկայի և տեխնոլոգիայի սոցիալ-փիլիսոփայական գնահատականն այն պիտի լինի, թե դրանք որքանով են նպաստում մարդկային աշխատանքի առավել արդյունավետ կատարմանը: Հանգամանորեն ուսումնասիրելով արհեստագործական աշխատանքից մանուֆակտուրային արտադրության միջանկյալ փուլով մեքենաների վրա հիմնված

³⁶ St' u Bluestone I., Creating a New World of Work // International Labour Review, vol. 115, № 1, 1977; Donahue T., Labor Looks at New Technology // Productivity: Prospects for Growth / Ed. by J.M. Rosow. N.Y.: Van Nostrand, 1981; Kunovich S., Stomczynski K.M., Systems of Distribution and a Sense of Equity: A Multilevel Analysis of Meritocratic Attitudes in Post-industrial Societies // European Sociological Review, v. 23, № 3, 2007.

³⁷ Ռիկյոր Պ., Աշխատանք և խոսք // Ռուսիկոն, 2007, № 2, էջ 5:

³⁸ St' u հանգամանորեն Միլբոյան Վ., Աշխատանքի մարքսյան փիլիսոփայությունը, էջ 131 - 197:

արտադրությանն անցումը՝ Մարքսն առաջին հեղինակն է, որ պարզաբանել է 18-րդ դարի վերջի-19-րդ դարի սկզբի առաջին արդյունաբերական հեղափոխության աղիպական պայմանավորվածությունը: Մասնավորապես, եթե ստրկատիրական հասարակարգին փոխարինած ավատատիրական հասարակարգը չփոխեց իր տեխնոլոգիական հիմքը, քանի որ, որպես բնամթերային տնտեսություն, լիովին բավարարվում էր արհեստագործական աշխատանքին հասու արտադրողականությամբ, ապա կապիտալիստական հասարակարգը, իրեն բնորոշ շուկայական տնտեսությամբ, խիստ կարիք ուներ աշխատանքի հասարակական արտադրողականության կտրուկ վերելքի, ուստի և իր իսկ էությամբ խթանում էր մեքենաների զանգվածային մուտքը արտադրություն:

Շարունակելով «մարդ – տեխնիկա» համակարգի ներսում կողմերի գործառնությունների վերաբաշխման տրամաբանության վերլուծությունը Մարքսը հանգում է արտադրության ավտոմատացման հեռանկարին և փորձում է բնութագրել այդ պայմաններում աշխատանքի սուբյեկտի տեղն ու դերը, ինչպես նաև նրա անձնային զարգացման հնարավորությունները: «Մարդ-տեխնիկա» համակարգի ինքնազարգացման մեջ Մարքսն առանձնացնում է «աշխատանքի կենդանի պրոցեսում արտադրության միջոցների ձևով մասնակցող անցյալ աշխատանքի անընդհատ աճող նշանակությունը»³⁹, որը վճռորոշ է դառնում արտադրության մեջ գիտության հարաճուն տեխնոլոգիական գործադրմամբ, և այդպիսի աշխատանքի սուբյեկտն այլևս ուղղակիորեն ներգրավված չի մնում արտադրության բուն ընթացքի մեջ, այլ աստիճանաբար արտամղվում է դեպի արտադրության վերտեխնոլոգիական ոլորտը: Այդ պայմաններում արդեն «աշխատանքը հանդես է գալիս արդեն ոչ այնքան իբրև արտադրության ընթացքում ներգրավված, որքան այնպիսի մի աշխատանք, որի դեպքում մարդը, ընդհակառակը, վերաբերվում է բուն արտադրության պրոցեսին իբրև այն վերահսկողը և կարգավորողը... Արտադրության գլխավոր գործակալը լինելու փոխարեն աշխատողը կանգնում է արտադրության կողքին»⁴⁰:

Իհարկե, նույնիսկ ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում այս կանխատեսումը լիովին իրականություն չի դարձել,

³⁹ Մարքս Կ., Կապիտալ, էջ 637:

⁴⁰ Маркс К., Экономические рукописи 1857 – 1861 гг., в 2-х ч., ч. 2, с. 215 – 216.

բայց փաստորեն Մարքսը միանգամայն ստույգ է նշել «մարդ – տեխնիկա» համակարգի զարգացման հիմնական միտումը: Իսկ անցյալ դարի 70-ական թվականների վերջից լայն թափով տարածվող «աշխատանքի հումանիզացման» տեսությունները և գործնական միջոցառումները⁴¹ դարձյալ հաստատում են մարքսյան եզրակացության հիմնավորվածությունը: Դրանց հիմքում ընկած է «աշխատանքն ինքնին» (work itself) գաղափարը, այսինքն՝ ժամանակակից մարդու աշխատանքային վարքագծի արդյունավետ կառավարման համար կարևոր է, անշուշտ, տնտեսական արդարացի վարձատրումը, նպաստավոր են աշխատանքային բարենպաստ պայմանները, դեկավարման ժողովրդավարական ոճը, աշխատակազմի ներսում տիրող հոգեբանական մթնոլորտը և այլն, բայց առաջին պլան են մղվել բուն աշխատանքին ներկայացվող պահանջները՝ ինքնին բովանդակալից լինելը, ստեղծագործական տարրերը, անձնային-մասնագիտական աճի հեռանկարը, աշխատանքի սոցիալական բարձր արժեքը, աշխատանքի միջոցով կազմակերպության ամբողջ գործունեության պլանավորմանը մասնակից դառնալու հնարավորությունը և այլն: Այս երևույթն առավել ցայտուն է դրսևորվում ներկա պայմաններում, և եթե նախկինում շրջանառության մեջ էին «սպառող հասարակության», «ժամանցի հասարակության», ամեն գնով՝ հաջողության հասնելու, նյութական բարգավաճման և էսական մրցակցության գաղափարները, ապա այսօր ավելի շատ հանդիպում ենք «իմաստալից աշխատանքի» բացառիկ կարևորությունը շեշտող հրապարակումների⁴², հար՝ և նման աշխատանքի մարքսյան հայեցակարգի հիմնադրույթներին:

Այսպիսով, մարքսյան այն կանխատեսումը, թե աշխատանքը երբևէ կդառնա մարդու համար առաջին կենսական պահանջմունք, թեկուզ որպես միտում սկսել է գերիշխել աշխատանքի հանդեպ նոր սերունդների վերաբերմունքի մեջ: Այսկերպ ևս մեկ անգամ համոզվում ենք մարքսյան հիմնադրույթների կենսունակության մեջ. դիցուք՝ ԽՍՀՄ օրոք աշխատանքի վերածումը մարդու առաջին կենսական պահանջմունքի հռչակվել էր որպես կոմունիստական

⁴¹ Տե՛ս հանգամանորեն Միքայել Վ., Կառավարման փիլիսոփայություն, 5-րդ., լրացվ. հրատ., Եր.: «ՎՄՎ-Պրինտ», 2015, էջ 182 – 211:

⁴² Տե՛ս Bregman R., Utopia for Realists, London: Bloomsbury, 2018, p. 44, 147; Gershuny J., Fisher K., Post-industrious society: Why work time will not disappear for our grandchildren // Sociology Working Papers, № 3, 2014, p. 30.

հասարակության կառուցման նպատակային դրույթ, բայց իրական կյանքում դա անկատար էր մնում: Իսկ ահա տեխնոլոգիական հնարավորությունների ընդլայնումը, կոմունիստական քարացած դոգմաներից ազատումը, կյանքի և աշխատանքի մասին 21-րդ դարի մարդու պատկերացումները նոր լույսով են մեզ մատուցում Մարքսի գաղափարները, նորովի համոզում դրանց ճշմարտությունը:

Իհարկե, Կարլ Մարքսի սխալների մասին (իրական և թվացյալ) դեռ շատ է գրվելու, ինչն արդեն իսկ աներկբա ապացույց է նրա ստեղծած տեսական կառույցի հարուցած հետաքրքրության: Ամենաթունդ հակամարքսիստներն անգամ պիտի ընդունեն, որ Մարքսի սխալները, այնուամենայնիվ, գիտնականի սխալներն են: Նա պրպտող հետազոտող է եղել, այլ ոչ թե մարգարե կամ քարոզիչ, ուստի և անգամ նրա սխալ եզրակացություններն ուշագրավ են և ուսանելի: Չի կարող լինել անսխալական գիտական աշխատանք, մանավանդ հասարակական գիտությունների ասպարեզում. չի եղել նախկինում և չի լինելու ապագայում: Բայց Մարքսի առավել «սխալաշատ» աշխատությունը՝ նրա տիտանական ջանքերի արգասիք «Կապիտալը» մինչև օրս տնտեսագետների, փիլիսոփաների, սոցիոլոգների, պատմաբանների ուշադրության կենտրոնում է, ասել է՝ թե «սխալներից» գատ դրանում կա վիթխարի փաստական նյութ և գրավիչ վերլուծություն:

Կարլ Մարքսի «Կապիտալը» եղել և մնում է կապիտալիստական արտադրանականի գոյացման, գործառության և ներքին հակասությունների վերաբերյալ առավել հիմնարար հետազոտությունը: Եվ ինչպես էլ ներկայումս անվանվի այդ հասարակարգը՝ «կապիտալիստական», «հետկապիտալիստական», «հետարդյունաբերական», «ազատ շուկայական տնտեսության» և այլն, միննույն է՝ դրա ամեն մի լրջմիտ վերլուծաբան չի կարող չջջանցել իր նախորդի՝ Կարլ Մարքսի կատարած աշխատանքը:

Կապիտալիզմը հետխորհրդային տարածքում հաղթանակել է, բայց սա չի նշանակում, թե պարտվել է կապիտալիզմի տեսաբան Կարլ Մարքսը: Կապիտալիզմը հաղթանակը մարքսիզմի պարտություն ընկալելը հենց ուղղագիծ, մակերեսային ընկալման այն արմատական սխալն է, որի վրա իրենց մտահայեցողական կառուցներն են մեզ հրամցնում Մարքսի քննադատները: Այնպես որ՝ Մարքսը, իսկապես, «վերադարձել» է, և վերադարձել է, քանի որ առանց «Կապիտալի» մանրագնին վերլուծության սոցիալական ոչ մի գիտնական չի կարող

կողմնորոշվել ժամանակակից կապիտալիզմի ինչպես բարենպաստ դերակատարման գնահատման, այնպես էր հակասությունների և ճգնաժամերի խորքային պատճառների պարզաբանման հարցում: Եվ ամեն ոք ինքը պիտի որոշի, թե ինչպես կարող է օգտագործել Կարլ Մարքսի թողած տեսական ժառանգության և մեթոդաբանության ներուժը սեփական աշխարհայացքի ձևավորման, գիտելիքների հարստացման և իմացական գործունեության համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի հիմնական գաղափարը Կարլ Մարքսի տեսական ժառանգության անաչառ վերագնահատման կարևորության շեշտադրումն է: 150 տարի առաջ լույս տեսած «Կապիտալ» կոթողային աշխատությունը՝ նրա կյանքի ամբողջ գործը, բնավ էլ արժանի չէ հետխորհրդային շրջանի հումանիտար գիտություններին բնորոշ ամոթխած անտեսմանը: Մինչդեռ հատկապես մարքսյան սոցիալական փիլիսոփայության հիմնադրույթները հույժ արդիական են 21-րդ դարին բնորոշ մարտահրավերներին դիմագրավելու և նոր ստեղծված հնարավորությունները բարենպաստ կերպով գործադրելու համար:

Բանալի բառեր՝ Կարլ Մարքս, կապիտալիզմ, Մարքսը և «մարքսիզմ-լենինիզմը», «Մարքսի սխալները», աշխատանքի փիլիսոփայություն, «մարդ – տեխնիկա» համակարգ, մեթոդաբանական դրույթները:

СОВРЕМЕННОСТЬ СОЦИАЛЬНОЙ ФИЛОСОФИИ КАРЛА МАРКСА

Валерий Мирзоян

*Доктор философских наук, профессор,
Армянского государственного экономического университета*

РЕЗЮМЕ

Основная идея статьи заключается в акцентировании на необходимости беспристрастной переоценки теоретического наследия Карла Маркса. Вышедший 150 лет назад его эпохальный труд – книга всей жизни – вовсе не достоин застенчивого пренебрежения со стороны гуманитарных наук постсоветских лет. Между тем именно основные положения социальной философии Маркса ныне архиважны как для

противостояния вызовом XXI века, так и для возможно благоприятного использования вновь открывшихся возможностей.

Ключевые слова: К. Маркс, капитализм, Маркс и “марксизм-ленинизм”, “ошибки Маркса”, философия труда, система “человек – техника”, методологические положения Марксовой социальной философии.

MODERNITY OF SOCIAL PHILOSOPHY OF KARL MARX

Valeri Mirzoyan

*Doctor of Philosophical sciences, Professor
Armenian State University of Economics*

SUMMARY

The main idea of the article is to emphasize the importance of the revalidation of the theoretical heritage of Karl Marx. The 150-year-old "Kapital" monumental work, the whole work of his life, is not worth the shameful fallacy of humanitarian sciences in the post-Soviet era. Meanwhile, the foundations of the Marx social philosophy are extremely actual in the best possible use of the challenges of the 21st Century and the new opportunities.

Key words: Karl Marx, capitalism, Marx and Marxism-Leninism, Marx's Mistakes, the Philosophy of Labor, Man – Machine System, Methodology of Marx's Social Philosophy.

КАРЛ МАРКС О ДЕЯТЕЛЬНОСТИ “ТАКЖЕ И ПО ЗАКОНАМ КРАСОТЫ”

Светлана Арзуманян

*Кандидат философских наук, доцент,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

Согласно К. Марксу, одной из отличительных характеристик подлинно человеческой деятельности является умение творить “также и по законам красоты”. Это умение распространяется не только на искусство и отдельные виды эстетической деятельности, но и на все